

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՔՈՒՉԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հ. Ամիրյանի կողմից  
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 15.12.2016 թիվ 40-Ա որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

ՔՈՒՉԱԿ 2017թ.

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀԶԾ-ն համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որի մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը նպատակաուղղված է համայնքի կայուն զարգացմանը:

## 2. ՀՀԶԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՀԶԾ -ն բաղկացած է 4 գլխից

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
3. ՀՀԶԾ ֆինանսավորում
4. ՀՀԶԾ մոնիթորինգ

### 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քուչակ համայնքում այսօր գործում են՝

1. Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը՝ որտեղ սովորում են 223 աշակերտ և աշխատում են 42 ուսուցիչներ և տեխնիկական աշխատողներ:
2. Համայնքում գործում է մարզադպրոց, որպես ՀՈԱԿ, հիմնականում գործում է ազատ ոճի ըմբշամարտի, ֆուտբոլի և վոլեյբոլի խմբակները:
3. Համայնքում որպես ՀՈԱԿ գործում է նաև մշակույթի բաժինը, որտեղ գործում են կերպարվեստի և պարի խմբակները, ինչպես նաև համայնքային գրադարանը 7306 կտոր գրքային ֆոնդով:
4. Համայնքում որպես ՀՈԱԿ գործում է Քուչակի բժշկական ամբուլատորիան, որը սպասարկում է մարզի Եղիպատրուշ և Ջրամբար համայնքները: Ամբուլատորիան ունի 12 աշխատակից և հագեցած է առաջին օգնության բժշկական սարքավորումներով:
5. Համայնքում սովետական տարիներին գործում էին Ապարանի գյուղտեխնիկա, Ապարանի բերրիություն հիմնարկ ձեռնարկությունները և Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը, որոնք այժմ չեն գործում:
6. Համայնքում գործում է նաև կապի և փոստային բաժանմունքները, որոնք կահավորված են ժամանակակից սարքավորումներով:
7. Համայնքում գործում են առևտուր իրականացնող 7 և սպասարկման 3 կետեր: Գործում են 2 դեղատուն 1 բենզայնակայան և 1 ավտոգազի լիցքավորման կայան: Համայնքում գործում է նաև հանդիսությունների սրահ, հացի արտադրամաս:  
Այս ոլորտում աշխատողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 40 մարդ:
8. Համայնքի տարածքում գործում է նաև <<Ապարան ԷՑՇ>> ՓԲԸ հիմնարկությունը:  
Քուչակ համայնքի ազգաբնակչության զբաղվածության խնդիրը մինչև անկախացման տարիները լուծված էր համայնքում գործող մի շարք հիմնարկ ձեռնարկությունների

աշխատանքի շնորհիվ, իսկ այժմ ազգաբնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն են:

Հողագործության ոլորտում զբաղվում են հիմնականում կարտոֆիլի, կաղամբի, հացահատիկի մշակությամբ, իսկ անասնապահության ոլորտում լավ զարգացած է ինչպես խոշոր եղջերավոր անասունների, այնպես էլ խոզաբուծության և մանր եղջերավոր անասունների բուծումը:

Քուչակ համայնքում շատ եռուն է եղել մշակույթային կյանքը: Չնայած մշակույթի տան բացակայության պայմաններում, որն այժմ կառուցման փուլում է, համայնքում չի դադարել մշակույթային կյանքը: Համայնքում գործում է պարի, կերպարվեստի և պատրաստվում ենք բացել նաև ձեռագործության խմբակներ: Խմբակները մասնակցել են հանրապետական մի շարք մրցումների և ցուցաբերել բավականին մեծ արդյունքներ: Սպորտի բնագավառում նույնպես համայնքն ունի բավականին ձեռքբերումներ, հատկապես ազատ ոճի ըմբշամարտի գծով, ունենք բավականին պարզներ, ինչպես նաև Հայաստանի չեմպիոն:

### 2.1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղ Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանում, Ապարանից 8 կմ հարավ, մարզկենտրոնից 18 կմ հեռավորության վրա: Որպես բնակատեղի Քուչակն ունի 4,5 հազար տարվա պատմություն: 17-րդ դարում գյուղին տրվել է Ալիքուչակ անունը: Մատենադարանում պահվող 1641 թ. գրված ձեռագրում հիշատակվում է Ապարանի որոշ գյուղերի անուններ, այդ թվում նաև Քուչակը, որը կոչվել է Ճերմակ վանք, Ալիքուչակ: 1935 թ.-ին ի պատիվ Նահապետ Քուչակի Գյուղը վերանվանվել է Քուչակ: Բնակավայրը գտնվում է Արագածի լեռնազանգվածի արևելյան ստորոտում և առանձնահատուկ է նրանով, որ գտնվում է մի շարք մայրուղիների խաչմերուկում: Ծովի մակարդակից բարձրությունը 1900 մ է:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4087,24 հա, որից՝  
ա/ բնակավայրեր և տնամերձ 202,87 հա  
բ/ վարելահողեր 1247,72 հա  
գ/ խոտհարքեր 154,0 հա  
դ/ արոտներ 1555,33 հա

Սեփականաշնորհման մեկ հողաբաժինը հազմում է 1,18 հա :

Համայնքում հաշվարկված է 550 ծուխ:

Ազգաբնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն և անասնապահությունն է:

Տարածաշրջանը բնորոշ է խստաշունչ ձմեռներով և զով ամառներով: Օդի նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև -20°C – 28°C, իսկ առավելագույնը +35°C-ի: Ձյան շերտի բարձրությունը հասնում է 100-150սմ-ի:

Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 2285 մարդ, որից՝

	արական	իգական
մինչև 6 տարեկան	78	84
6-14 տարեկան	108	120
14-25 տարեկան	215	194

25-50 տարեկան	496	434
50 և ավել տարեկան	193	363
Ընդամենը	1090	1195

Բնակչության տարեկան միջին աճը կազմում է 20 մարդ տարին:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ինչպես ամբողջ հանրապետությունում այնպես էլ Քուչակ համայնքում 1996 թ. ընտրությունների միջոցով ձևավորվեց առաջին տեղական ինքնակառավարման մարմինը: Շուրջ 20 տարի ՏԻՄ-ի գործունեության արդյունքում համայնքում իրականացվել և իրականացվում են ներքոհիշյալ մի շարք ծրագրեր

1. Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի մասնակի վերակառուցում
2. Մշակույթի տան վերակառուցում
3. Անտառածածկույթի ստեղծում
4. Համայնքում գազաֆիկացման ցանցի ընդլայնում
5. Համայնքային ճանապարհների վերանորոգում
6. Ներհամայնքային ոռոգման ցանցերի մաքրում և բարեկարգում

Ամենամյա աշխատանքներից են

ա/ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, ճանապարհների ձմեռային սպասարկում և մաքրում

բ/ Մշտական աջակցության համայնքի գյուղատնտեսական աշխատանքներին /ժամանակին պետ. աջակցության շնորհիվ մատչելի գներով պարատանյութերի, սերմացուների և դիզ. վառելիքի մատակարարում/

գ/ Համայնքային միջոցառումների կազմակերպում

Ամանորյա միջոցառում, զինակոչի կազմակերպում, ուսուցիչի օր, առաջին և վերջին զանգեր, համայնքի եկեղեցու վերաբացման տարեդարձ, հաղթանակի օր:

դ/ Աղբահանության կազմակերպում:

ե/ Խմելու ջրագծերի սպասարկում:

զ/ Անապահով ընտանիքներին սոցիալական օգնության տրամադրում:

## ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐ

1. Համայնքի խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:
2. Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում:
3. Մանկապարտեզի կառուցում:
4. Մշակույթի տան վերակառուցման աշխատանքների ավարտում:
5. Ոռոգման ցանցի վերակառուցում:
6. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում:
7. Անտառտնկման աշխատանքների շարունակում:

8. Համայնքի գլխավոր հատակագծի կազմում:
9. Արտավայրերի ջրարբիացման աշխատանքներ:
10. Մանկական խաղահրապարակի հիմնում:
11. Տուրիզմի և զբոսաշրջության պայմանների ստեղծում:
12. Նոր աշխատատեղերի ստեղծում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

h/h	Ցուցանիշներ	Չափի միավոր	2016 փաստ	2017 կանխ	2018 կանխ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
1	Համայնքի վարչական տարածք	հա	4087,24	4087,24	4087,24	4087,24	4087,24	4087,24
2	Բնակչության թիվը, այդ թվում	մարդ	2285	2300	2318	2336	2354	2372
	Կանայք	մարդ	1195	1202	1210	1218	1226	2234
	Տղամարդիկ	մարդ	1090	1098	1108	1118	1128	1138
3	Բնակելի առանձնատների թիվը	տուն	530	+3	+6	+8	+9	+10
4	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	4,0	4,5	5	5,5	6	6,5
	Այդ թվում բնակչությունից	տոննա	3,0	3,5	4,0	4,5	5,0	5,5
5	Ոռոգման ցանցի երկարություն	կմ	27	27	27	29	31	36
6	Ոռոգելի հողերի մակերեսը	հա	400,6	400,6	402,6	404,6	404,8	405,2
7	Խմելու ջրի ցանցի երկարությունը ներհամայնքային	կմ	24	24	24	25	26	28
8	Ներհամայնքի փողոցներ և ճանապարհներ	կմ	15,3	15,5	16,0	17,0	18,0	20
9	Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	1866	1870	1900	1920	1950	2000
10	Մանր եղջերավոր անասուններ	գլուխ	1042	1050	1100	1150	1200	1250
11	Առևտրի և ծառայությունների օբեկտների թիվը, այդ թվում	հատ	11	11	12	13	13	15
	Առևտրի օբեկտ	հատ	9	9	10	11	11	13
	Բենզինի լից. կետ	հատ	1	1	1	1	1	1
	Գազի լից. կետ	հատ	1	1	1	1	1	1
12	Համայնքի սեփականություն համարվող հողերի մակերեսը	հա	1142,0	1142,0	1142,0	1142,0	1142,0	1142,0
13	Վարձ. տրամադրվող հողերի մակերեսը	հա	31	36	40	46	50	60
14	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	ընտանիք	100	105	115	120	125	130
15	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	աշակերտների թիվը	մարդ	223	230	240	250	260	270
	աշխատողների թիվը	մարդ	12	12	13	14	15	17
	ուսուցիչների թիվը	մարդ	30	30	31	32	33	35
16	Մշակույթային հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	Խմբերի թիվը	խումբ	2	2	3	4	5	6
	Երեխաների թիվը	մարդ	40	40	60	70	70	80
17	Մարզադպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	խմբերի թիվը	խումբ	3	3	4	5	6	7
	Երեխաների թիվը	մարդ	80	85	90	100	110	120
18	Առողջապահական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	Այցելուների թիվը	մարդ	2400	2400	1250	2450	2500	2550
	Աշխատողների թիվը	մարդ	10	10	11	11	12	12

19	Սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	ընտ	190	190	185	180	175	170
20	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	177	185	190	195	200	205
21	Հաշմանդամների թիվը	մարդ	138	140	142	144	146	150
22	Ծնողազուրկ երեխաների թիվը	մարդ	4	4	4	4	4	4
23	Աշխատունակների թիվը	մարդ	1400	1420	1435	1455	1465	1470
24	Զբաղվածների թիվը	մարդ	855	860	865	880	890	900
25	Գործազուրկների թիվը	մարդ	510	510	510	510	510	510
26	Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը	ընտ.	65	63	60	58	56	54
27	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	52	52	50	48	46	44
28	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ. դր	32,0	32,0	35,0	40,0	45,0	50,0

### 2.1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հ/Հ	Կառույցի տեսակը	Հասցեն	Կառուցման տարեթիվը	Չափը	Ընդհանուր վիճակի գնահատականը	Նորոգման /վերականգման /կարիք
1	Համայնքապետարանի շենք	6-րդ փող. 7	1937	100 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
2	Մշակույթի տուն	1-ին խճ. 23	1976	450 քմ	կառուցման փուլում	վերակառուցում
3	Խմելու ջրի ներհամայնքային ցանց	գ. Քուչակ	1950		ոչ բարվոք	փոխարինման կարիք
4	Ոռոգման ներհամայնքային ցանց	գ. Քուչակ	1991	8000 մ	ոչ բարվոք	փոխարինման կարիք
5	Ներհամայնքային ճանապարհներ	գ. Քուչակ	1965	13500 մ	ոչ բարվոք	վերանորոգման կարիք
6	Գիշերային լուսավորության ցանց	գ. Քուչակ	2013	1500 մ	բարվոք	նորոգման և ընդլայնման կարիք
7	Մարզադպրոց	6-րդ փ. 22	1988	535,1 քմ	բարվոք	Ջեռուցման և մարզասարքերի կարիք

### 2.1.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ /ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ/ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017-2021 թթ. ընթացքում Քուչակ համայնքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ, համայնքում իրականացվող և ապագայում իրականացվելիք ծրագրերը կյանքի կոչելու համար:

Պետական ներդրումային ծրագրերի իրականացման գործում, նախատեսվում է համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Համայնքը ակտիվ համագործակցում է նաև Word wision Armenia, GIZ գերմանական կազմակերպության, ՇԵՆ ԲՀԿ, Կանաչ արահետ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

#### 2.1.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների, տեղական տուրքերի և ֆինանսական դոտացիաների հաշվին: Սեփական եկամուտները 2016 թ.-ին կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 23.3%-ը, իսկ ֆինանսական դոտացիաները 76.7%: Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է սեփական եկամուտների աճ, որը ներկայացնում ենք աղյուսակի տեսքով:

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2016թ. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. նախատ.	2019թ. նախատ.	2020թ. նախատ.	2021թ. նախատ.
1	2	3	4	5	6	7	8
	Բյուջետային մուտքեր ընդամենը	48511,7	49211,7	50571,7	52031,7	53491,7	54961,7
1	Հարկեր և տուրքեր	9606,2	10256,2	11016,2	11776,2	12536,2	13306,2
2	Գույքային հարկեր անշարժ գույքից	498,7	508,7	528,7	548,7	568,7	588,7
3	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	498,7	508,7	528,7	548,7	568,7	588,7
4	Հողի հարկ	4124,6	4224,6	4424,6	4624,6	4824,6	5024,6
5	Գույքային հարկեր այլ գույքից	4742,9	5242,9	5742,9	6242,9	6742,9	7242,9
6	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4742,9	5242,9	5742,9	6242,9	6742,9	7242,9
7	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ						
8	Տեղական տուրքեր	240,0	280,0	320,0	360,0	400,0	450,0
9	Պաշտոնական դրամաշնորհներ	37209,7	37209,7	37709,7	38309,7	38909,7	39509,7
10	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	37209,7	37209,7	37709,7	38309,7	38909,7	39509,7
11	Այլ եկամուտներ						
12	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1695,8	1695,8	1745,8	1795,8	1845,8	1895,8
13	Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1695,8	1695,8	1745,8	1795,8	1845,8	1895,8
14	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր						
15	Այլ եկամուտներ	0	50,0	100,0	150,0	200,0	250,0

16	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	0	50,0	100,0	150,0	200,00	250,0
17	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր (1+2+3)						
18	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						

## 2.1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### ԽՈՉՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը խոչնդոտող գործոններն են

- Բնակլիմայական խիստ պայմանները
- Գյուղ մթերքների իրացման դժվարությունները
- Աշխատատեղերի սակավությունը
- Բնակարանաշինության ցածր մակարդակը
- Ճանապարհների և ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը
- Համայնքի երիտասարդության խնդիրների լուծման ցածր մակարդակը

## 2.1.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քուչակ համայնքի ուժեղ կողմերն են

- Մարդկային և աշխատանքային մեծ ռեսուրսների առկայությունը
- Խմելու քաղցրահամ աղբյուրների բավարար քանակությունը
- Հասարակական և առևտրային օբյեկտների առկայությունը
- Ուսանած և ուսանող ազգաբնակչության մեծ քանակը
- Տրանսպորտային մշտական կապը հանրապետության հարավային և հյուսիսային շրջանների հետ
- Գյուղատնտեսական տեխնիկաների առկայությունը
- Համայնքի գազաֆիկացման առկայությունը
- Հեռախոսակապի մշտական առկայությունը

Քուչակ համայնքի թույլ կողմերն են

- Կլիմայական դժվարին պայմանները
- Գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը
- Աշխատատեղերի սակավությունը
- Արտագաղթ

## 2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր հանված հիմնահարցեր

- Մանկապարտեզի կառուցում
- Մանկական զբոսայգու կառուցում
- Ոռոգման համակարգի կառուցում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Գիշերային արտաքին լուսավորության ընդլայնում
- Մշակույթի տան կառուցման ավարտ
- Համայնքի արոտավայրերի ջրաբխացում և անասնապահության զարգացում
- Բնապահպանական խնդիրների լուծման և անտառտնկման աշխատանքների ընդլայնում:

### 2.2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԻ (ՏԵՍԼԱԿԱՆԻ) ՍԱՀՄԱՆՈՒՄ

Քուչակ համայնքի տեսլականը հինգ տարվա համար սահմանվել է հետևյալ կերպ.

Քուչակը դարձնել օրինակելի համայնք, օրինակելի տեղական ինքնակառավարման համակարգով, գյուղատնտեսության ոլորտում, տուրիզմի և մշակույթային կյանքում, բիզնեսի և ներդրումների համար զարգացած գործարար միջավայր ունեցող համայնք, որի արդյունքում բնակիչները կապրեն բարեկեցիկ և արժանավայել կյանքով:

### 2.2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ռազմավարական նպատակ 1.

Զարգացնել

Գյուղատնտեսությունը

Ռազմավարական խնդիր 1.1.

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ստրուկտուրաների ապահովում

Միջոցառումներ՝

- Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում
- Արոտավայրերի ջրաբխացում
- Ոռոգման համակարգի զարգացում
- Արոտավայրերի բարելավում

## Ռազմավարական խնդիր 1.2

Գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ ծառայությունների ստեղծում

Միջոցառումներ`

- Ապահովագրական համակարգի առկայություն
- Մեքենատրանսպորտային պարկի ստեղծում
- Գյուղատնտեսական կոպերատիվի ձևավորում
- Տեղեկատվական համակարգի հիմնում

## Ռազմավարական խնդիր 1.3

Գյուղատնտեսության շահույթաբերության բարձրացում

Միջոցառումներ`

- Խորհրդատվությունների տրամադրում
- Գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասերի հիմնում
- Ֆերմերային տնտեսությունների հիմնում
- Նոր սերմերի ձեռքբերում

## Ռազմավարական նպատակ 2

Զարգացնել այլ ճյուղերի գործունեությունը

### Ռազմավարական խնդիր 2.1

Փոքր և միջին բիզնեսի աջակցություն

Միջոցառումներ`

- Աջակցություն համայնքում վերամշակման արտադրության հիմնմանը
- Նոր բիզնեսի հիմնման ու վարման դասընթացների կազմակերպում
- Օգնել արտադրանքի իրացման հարցում:

## Ռազմավարական խնդիր 3

Բարձրացնել համայնքի բնակչության ապրելակերպի որակը և տեղեկացվածության աստիճանը

### Ռազմավարական խնդիր 3.1

Համապատասխան ֆիզիկական ինֆրակառուցվածքների ստեղծում և պահպանում

Միջոցառումներ`

- Մշակույթային կյանքի զարգացում
- Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում
- Հակահեղեղային համակարգի վերանորոգում
- Ջրահեռացման համակարգի կառուցում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Խմելու ջրի համակարգի բարելավում

Ռազմավարական խնդիր 3.2

Բարելավել բնակչության հանգստի, սպորտի և ժամանցի պայմանները

Միջոցառումներ`

- Համայնքում հանգստի և ժամանցի գոտիների ստեղծում
- Մարզահրապարակի կառուցում
- Ֆուտբոլի դաշտի բարեկարգում
- Նոր անտառաշերտերի հիմնում

Ռազմավարական նպատակ 4

Զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման և գործունեության արդյունավետությունը

Միջոցառումներ`

- Ազգաբնակչության սպասարկման որակի բարելավում
- Խորհրդակցական մարմինների և ավագանու ակտիվ մասնակցություն համայնքի կառավարման գործում
- Անդամակցության համապատասխան հասարակական կազմակերպություններին
- Թափանցիկ գործունեություն
- Համայնքապետարանի աշխատակազմի ուսուցում:

ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Արժեքը միլն. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսական տևողության չափը
1	Մանկապարտեզի շենքի կառուցում	110,0	պետրոլջե համայնք	101,0 9,0 2018-2019
2	Մշակույթի տան կառուցում	300,0	պետրոլջե	300,0 2017-2018
3	Ոռոգման ցանցի վերակառուցում	70,0	Ջրային պետ. կոմիտե համայնք	66,0 4,0 2017-2019
4	Խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերակառուցում	800,0	Միջազգային կազմակերպ. համայնք	760,0 40,0 2018-2012

5	Արտավայրերի ջրարբիացում	90,0	ԳՏԶԾԻԳ ՊՀ համայնք	85,5 4,5 2017-2018
6	Դաշտամիջյան ճանապարհների բարելավում	3,0	համայնք	3,0 2017-2021
7	Խմելու ջրի և բնական հյուսիսի արտադրամասի հիմնում	1,0 մլրդ	գործարար	1,0 մլրդ 2017-2021
8	Համայնքապետարանի շենքի վերանորոգում	4,0	համայնք	4,0 2017-2019
9	Մանկական զբոսայգու հիմնակառուցում	4,0	համայնք	4,0 2018-2019
10	Նորաստեղծ անտառների պահպանում	10,0	Միջազգային կազմակերպություններ համայնք	7,0 3,0 2017-2021
11	Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	8,0	Արագածոտնի մարզպետարան համայնք	5,0 3,0 2017-2018
12	Համայնքի գլխավոր հատակագծի կազմում	6,0	ՀՀ ԿԱ ԱԳ ԿՊԿ	6,0 2017
13	Ամբուլատորիայի շենքի բարեկարգում	3,0	համայնք	3,0 2019-2021
14	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	5,0	համայնք	5,0 2017-2021

### 2.2.3. ՀՀԶԾ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԸ /ՏԵՍԼԱԿԱՆԸ/ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ

#### ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քուչակ համայնքի տեսլականը սահմանվել է հետևյալ կերպ.

Քուչակ համայնքը դարձնել մշակույթի, տուրիզմի, բիզնեսի և ներդրումների համար գրավիչ և զարգացած գործարար միջավայրի, գյուղատնտեսական արտադրանքի զարգացման որոշակի ուղիներ ունեցող համայնք, որի համար կան բոլոր նախադրյալները՝ միջպետական ճանապարհ, սառնորակ աղբյուրներ, գեղեցիկ բնություն, որի արդյունքում ազգաբնակչությունը ապահովված կլինի աշխատանքով, կապրեն բարեկեցիկ և արժանավայել կյանքով:

Այս ռազմավարության համար հիմք են հանդիսանում հետևյալ նախադրյալները՝

- Անհրաժեշտ որակյալ մասնագետների և այլ ռեսուրսների առկայություն:
- ՏԻՄ-ի որոշակի փորձի և բավարար օրենսդրական դաշտի առկայությունը:
- Գյուղատնտեսության վարման բարենպաստ պայմաններ:
- Տուրիզմի և հանգստի առանձին ձևերի զարգացման բարենպաստ պայմաններ:

### 2.3 ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՀՀԶԾ –ի ֆինանսավորման հիմնական աղբյուրները համայնքապետարանը ակնկալում է միջազգային և բարեգործական կազմակերպությունների, բարերարների, հասարակական կազմակերպությունների, ՀՀ կառավարության մարզպետարանի, ինչպես նաև համայնքի սեփական եկամուտների հաշվին:

### 2.3.1 ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ-ի իրականացման ժամանակահատվածում կենթարկվեն մոնիթորինգի, կմշակվի մոնիթորինգի պլան, որը հնարավորություն կտա համայնքին վերահսկելու իրականացվող ծրագրերը և ամեն տարի մինչև հաջորդ տարվա 1-ին եռամսյակը պատրաստել մոնիթորինգի հաշվետվություն և ներկայացվի համայնքի ավագանուն, իսկ հաշվետվության մեկ օրինակ կուղարկվի ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն:

### 3. ՀՀԶԾ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄ

ՀՀԶԾ-ի հաստատվելուց հետո կատարվելու է իրազեկման գործընթացը՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների, համայնքի ավագանու, աշխատակազմի, համայնքի ընդհանուր ժողովների միջոցով, ինչպես նաև կտեղադրվի Քուչակ համայնքի պաշտոնական կայք էջում:

### 4. ՀՀԶԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՀԶԾ-ի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է, ինչպես նաև համայնքի աշխատակազմի տվյալ ոլորտի ստորաբաժանման կամ համայնքի ենթակայության կազմակերպության ղեկավարը՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

### 5. ՀՀԶԾ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի, որի արդյունքում պատասխան է տրվում երեք հիմնական հարցի

- Ինչպես է ծրագիրն իրականացվել կամ իրականացվում
- Ինչ ազդեցություն է այն ապահովել
- Արդյոք ստացված արդյունքներն արդարացնում են այն ծախսերը, որոնք իրականացվել են արդյունքներն ապահովելու համար:

Գնահատման համար տեղեկատվական բազան ապահովում է մոնիթորինգի միջոցով:

Գնահատման հիմնական նպատակը ծրագրի իրականացման ժամանակ եղած թերությունների, դրանց պատճառների բացահայտումն է, որոնք շտկելու հնարավորություններ ու լուծումներ է առաջարկվում:

## 6. ՀՀԶԾ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՀԶԾ –ն համայնքի տեսլականի, նպատակների, ձգտումների և ջանքերի ամփոփում է մեկ փաստաթղթում: ՀՀԶԾ-ն համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևոր հարցերի արտացոլում է :

Համայնքի բնակչությունը ՀՀԶԾ-ի նկատմամբ պետք է ունենա սեփականության զգացում, օժանդակություն և ներդրում ապահովեն ծրագրերի իրականացման գործում, այսինքն ծրագրերի իրականացումը կատարվելու է համայնքի ամբողջ բնակչության անմիջական մասնակցությամբ: